ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 06.06.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-30/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-30/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից և հիմք ընդունելով «Կապավոր» ՍՊԸ-ի կողմից 20.05.2013թ. գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված դիմումով՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/1-ՃՀ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու մասին, ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու և հանձնաժողովին «Կապավոր» ՍՊԸ-ի հայտը քննարկել պարտադրելու պահանջի մասին 17.05.2013թ. ներկայացված բողոքը առանց քննության թողնելու մասին միջնորդությունը և Կենտրոնի կողմից ներկայացված եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կապավոր» ՍՊԸ-ի՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-13/1-ՃՀ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ պայմանագիր կնքելու և ընտրված (հաղթող) մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու և հանձնաժողովին «Կապավոր» ՍՊԸ-ի հայտը քննարկել պարտադրելու պահանջի մասին, 17.05.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամներ՝ Էդգար Հակոբյան

Համլետ Գասպարյան